

1247

Ի. Լ Ե Ն Ի Ն

ԵԿՈՆՈՄԻԿԱՆ

ՅԵՎ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ
ԴԻԿԱՏՈՒՐԱՅԻ ԴԱՐԱՁՐՁԱՆՈՒՄ



Պ Ե Տ Ա Բ Ա Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՕԳՈՅԻ 9 • 1938

3K23
3-38

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՎՆԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ք

03 NOV 2004 MAY 2005

Մ Հ 23
Մ 38
ար.

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԵԿՈՆՈՄԻԿԱՆ

ՅԵՎ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԻ
ԴԻԿԱՏՈՐԱՅԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Պ Ե Տ Հ Բ Ա Տ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1938

10 SEP 2013

1247

6184
38

В. И. ЛЕНИН

ЭКОНОМИКА И ПОЛИТИКА В ЭПОХУ ДИКТАТУРЫ ПРОЛЕТАРИАТА

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1938

ԵԿՈՆՈՄԻԿԱՆ ՅԵՎ ՔԱՂ.ՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵ-
ՏԱՐԻԱՏԻ ԴԻԿԱՍՈՒԹՅԱՅԻ ԴԱՐՄՇՐՋԱՆՈՒՄ¹

Խորհրդային իշխանության յերկամյա հորելյանի առ-
թիվ յես մտադիր եյի գրել մի փոքրիկ բրոցյուր՝ վերնա-
գրում մատնանշված թեմայով։ Բայց ամենորյա աշխատան-
քի յեռուցեսի մեջ ինձ չհաջողվեց մինչև այժմ առանձին
մասերի նախապատրաստությունից ավելի հեռուն գնալ։
Այդ պատճառով ել յես վճռել եմ տվյալ խնդրի մասին, իմ
կարծիքով, ամենաեյական մտքերի կարձ, կոնսպեկտիվ
շարադրանքի մի փորձ անել։ Հասկանալի յե, շարադրան-
քի կոնսպեկտիվ բնույթը բերում ե իր հետ շատ անհար-
մարություններ և մինումներ։ Բայց, թերևս, ժուռնալի
փոքրիկ հոդվածի համար, այնուամենայնիվ, հասանելի լի-
նի մի այսպիսի համեստ նպատակ—զանազան յերկրների
կոմունիստների քննարկման համար տալ հարցի դրվածքը
և նրա հինգամծքը։

1

Թեորիապես տարակույսի յենթակա չե, վոր կապիտա-
լիզմի և կոմունիզմի միջև ընկած և վորոշ անցողիկ զրջան:
Նա չի կարող իր մեջ չմիացնել հասարակական տնտեսու-
թյան այդ յերկու կացութաձևների գծերը կամ հատկու-

¹ «Ծինունիքան և փառքականությունը պրոլետարքանի դիկտուտուրայի դրաբարձրանման» հոդվածը գրված է 1919 թ. հոկտեմբերի 30-ին, առաջին անգամ տպագրվել է 1919 թ. նոյեմբերի 7-ին «Коммунистический Интернационал» ժուռնալի № 6-ում։ Հոդվածն ավարտված չէ։

թյունները: Անցման այդ ժամանակաշրջանը չի կարող չլինել մեռնող կապիտալիզմի և ծնվող կոմունիզմի միջև կովի ժամանակաշրջան, կամ, այլ խոսքով՝ պարտված, բայց չոչնչացված կապիտալիզմի և ծնված, բայց գեռ բոլորովին թույլ կոմունիզմի միջև:

Վհաճն մարքսիստի համար, այլև յուրաքանչյուր կրթված մարդու համար, վոր այսպես թե այնպես ծանոթ ե գարգացման թերթիային, ինքնըստինքյան պարզ պիտի մինի անհրաժեշտությունը մի ամբողջ պատմական դարաշրջանի, վոր հատկանշվում է անցման ժամանակաշրջանի այդ գծերով: Յեվ, սակայն, սոցիալիզմին անցնելու մասին յեղած այն բոլոր դատողությունները, վոր մենք լսում ենք մանր-բուրժուական դեմոկրատիայի ժամանակակից ներկայացուցիչներից (իսկ այդպիսիք հանդիսանում են, հակառակ իրենց իբր թե սոցիալիստական պիտակին, II Ինտերնացիոնալի բոլոր ներկայացուցիչները, ներառյալ այնպիսի մարդկանց, ինչպես Մակրոնալդն ու Ժան Լոնդեն, Կառուցկին ու Ֆրիդրիխ Ադլերը), աչքի յեն ընկնում այդ ամենաակնհայտ ձշմարտության կատարյալ մոռացությամբ: Մանր-բուրժուական դեմոկրատներին հատուկ են՝ ատելություն գեղի դասակարգային պայքարը, յերազանք այն մասին, վորպեսպի յոլա գնան առանց նրան, ձգտումն հարթելու և հաշտեցնելու դասակարգային պայքարը, նրա սուրծայրերը բթացնելու: Այդ պատճառով այդպիսի դեմոկրատները կամ հրաժարվում են վորեն կերպ ընդունել կապիտալիզմից կոմունիզմին անցնելու մի ամբողջ պատմական շրջանը կամ իրենց ինչդիրն են համարում այդ յերկու պայքարող ուժերի հաշտեցման պլաններ հորինելը, փոխանակայն բանի, վոր այդ ուժերից մեկի պայքարը ղեկավարեն:

II

Առաջավոր յերկների համեմատությամբ Թուսաստանում պրոլետարիատի գիկատառերան անխուսափելիորեն պետք է տարբերվի միքանի առանձնահատկություններով,

մեր յերկրի շատ խոշոր հետամնացության և մասնրբությունության հետևանքով: Բայց հիմնական ուժերը—և հասարակական անտեսության հիմնական ձևերը—Ծուսաստանում նույնն են, ինչպես և վորեւ կապիտալիստական յերկրում, այնպես վոր այդ առանձնահատկությունները, համենայն գեպս, չեն կարող շրջափել ամենազլիավորը:

Հասարակական անտեսության այդ հիմնական ձևերն են՝ կապիտալիզմ, մանր ապրանքային արտադրություն, կոմունիզմ: Այդ հիմնական ուժերն են՝ բուրժուազիա, մանր բուրժուազիա (առանձնապես զյուղացիությունը), պրոլետարիատ:

Պրոլետարիատի գիկատառերայի դարաշրջանում Ռուսաստանի եկոնոմիկան ինքնին ներկայացնում է—հսկայական պետության միասնական մասշտաբով—կոմունիստորեն միացած աշխատանքի պայքարի առաջին քայլերն ընդգեմ մանր ապրանքային արտադրության և պահպանված, ինչպես և նրա բազայի վրա վերածնվող կապիտալիզմի գեմ:

Ծուսաստանում աշխատանքը կոմունիստորեն միացած է այն չափով, վորչափով, նաև, արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը վերացված է, և վորչափով, յերկրորդ, պրոլետարական պետական իշխանությունը կազմակերպում է համազգային մասշտաբով խոշոր արտադրությունը պետական հողի վրա և պետական ձեռնարկություններում, բաշխում է աշխատող ուժերը անտեսության զանազան ձյուղերի և ձեռնարկությունների միջև, բաշխում է աշխատավորների միջև մասսայական քանակությամբ պետությանը պատկանող սպառման արդյունքները:

Մենք խոսում ենք կոմունիզմի «առաջին քայլերի» մասին Ռուսաստանում (ինչպես ասում է այդ նաև մեր կուսական ծրագիրը, վոր ընդունված է 1919 թվի մարտին)¹, վորովեակ այդ բոլոր պայմաններն իրագործված

¹ 1919 թ. մարտին Ռեկ(բ)Կ VIII համագումարն ընդունեց կուսակցության ծրագիրը, վորի հիմքում դրված եր լենինի նախագիծը:

են մեզ մոտ միայն մասամբ, կամ այլ խոռքերով՝ այդ պայշանների իրագործումը գտնվում է միայն սկզբնական ստադիայում։ Միանգամից, մի հեղափոխական հարվածով, արված է այն, ինչ վոր առնասարակ կարելի յե անել միանգամից, որինակ, պրոլետարիատի դիկտուրայի հենց առաջին որը, 1917 թվի հոկտեմբերի 26-ին (1917 թվի նոյեմբերի 8-ին), վերացված է հողի մասնավոր սեփականությունն առանց խոշոր սեփականատերերին հատուցանելու, երսպարովիացիայի յեն յենթարկված հողի խոշոր սեփականատերերը։ Միքանի ամսում երսպարովիացիայի յեն յենթարկված, նույնպես առանց հատուցման, գրեթե բոլոր խոշոր կապիտալիստները, ֆաբրիկաների, գործարանների, ակցիոներական ձեռնարկությունների, բանկերի, յերկաթուղիների տերերը և այլն։ Արդյունաբերության մեջ խոշոր արտադրության պետական կազմակերպությունը, Փարբիկաների, գործարանների, յերկաթուղիների վրա «բանվորների վերահսկողությունից» «բանվորական կառավարման» անցնելը, — ոս հիմնական ու ամենազիտավոր գծերով արդեն իրագործված է, բայց հողագործության նկատմամբ դա նոր-նոր սկսված է («Խորհրդային տնտեսությունները», խոշոր տնտեսությունները, վորոնց բանվորական պետությունը կազմակերպել և պետական հողի վրա)։ Նույն կերպով նոր-նոր սկսված է մասն հողագործների ընկերությունների զանազան ձևերի կազմակերպումն իրեն անցում մասն ապրանքային հողագործությունից կումունիստականին¹։ Մինույնը պետք է անել մասնավոր առևտորի փոխարեն մթերքների բաշխման պետական կազմակերպության մասին, այսինքն հացի պետական մթերումն

1 Խորհրդային Ռուսաստանում «Խորհրդային տնտեսությունների» և «հողագործական» կոմունաների թիվը հասնում է մոտ 3,536-ի և 1,961-ի, «հողագործական արտելների» թիվը՝ 3,696-ի։ Մեր կետրոնական Վիճակգրության վարչությունը ներկայումս բոլոր խորհրդային տնտեսությունների և կոմունաների հիշտ վեճակագրությունն է կատարում։ Հանրագումարները կատացվեն 1919 թվի նոյեմբերին։ Շանորդությունը կենթի:

ու առաքումը քաղաքները, արդյունաբերական մթերքները՝ գյուղը։ Ներքեռում մեջ կրերվեն այդ հարցի շուրջը յեղած վիճակագրական տվյալները։

Գյուղացիական տնտեսությունը շարունակում է մասն ապրանքային արտադրություն։ Այսուղի մենք ունենք չափազանց լայն և շատ խորը, շատ հաստատուն արմատներ ունեցող կապիտալիզմի բազա։ Այդ բազայի վրա կապիտալիզմը պահպանվում է և նորից վերածնվում ամենադժգույն կավում կոմունիզմի դեմ։ Այդ կովի ձևերն են՝ տոպրակավորությունը (մետահանություն) և սպեկուլացիան, վերոնքուղղված են հացի (ինչպես և այլ մթերքների) պետական մթերքան դեմ, — առնասարակ մթերքների պետական բաշխման դեմ։

III

Այդ վերացական թեորիական գրությունները լուսաբանելու համար մեջ բերենք կոմիքետ տվյալներ։

Պարենթողկոմատի (Պարենալորման ժողովրդական կոմիսարիատի) տվյալներով Ռուսաստանում հացի պետական մթերումը 1917 թ. ոգոստոսի 1-ից մինչև 1918 թ. ոգոստոսի 1-ը տվել է մոտ 30 միլիոն փութ։ Հետեւյալ տարում՝ մոտ 110 միլիոն փութ։ Մթերման հետագա կամպանիայի (1919—1920) առաջին յերեք ամսում թվերն, ըստ յերեսութիւն, կատանեն 45 միլիոն փութ։ Ըստ գետեմ 1918 թվի հենց նույն ամիսների (սպոստու—հոկտեմբեր) 37 միլ. փութ։

Այդ թվերը պարզապես խոսում են գործերի գանդաղ, բայց անշեղ լավացման մասին՝ կոմունիզմի հաղթության իմաստով կապիտալիզմի դեմ։ Այդ լավացումը ձեռք է բերվում, չնայած աշխարհում չլսված դժվարություններին, վոր պատճառում է քաղաքացիական պատերազմը, վորը սուսական և արտասահմանյան կապիտալիստները կազմակերպում են, լարելով աշխարհի ամենանզոր պետությունների բոլոր ուժերը։

Ուստի և ինչքան ել վոր ստեն, ինչքան ել վոր զբր-

պարտեն բոլոր յերկրների բուրժուաները և նրանց ուղղակի և քողարկված համհարդները (II Խնտերնացիոնալի «սուցիալիստները»), անտարակուութիւն յև մոռմ այս, վոր, հիմնական տնտեսական ոլրորդնեմի տեսակետից, պրոլետարիատի դիկտատուրայի համար մեզ մոտ ապահոված և կոմունիզմի հաղթանակը կապիտալիզմի գեմ: Ամբողջ աշխարհի բուրժուազիան հենց այն պատճառով և կատաղում ու մոլեկնում բոլշևիզմի գեմ, կազմակերպում ուղմական արշավանքներ, դավադրություններ և այլն բոլշևիզմի գեմ, վոր նա գերազանցողեն հասկանում և հասարակական անտեսության վերակառուցման մեջ մեր հաղթանակի անհուսափելիությունը, յեթե մեզ չճնշեն ուղմական ուժով: Իսկ այդ յեղանակով մեզ ճնշել նրան չի հաջողվում:

Թե հատկապես ինչ չափավ մենք արդեն հաղթել ենք կապիտալիզմին այն կարճ ժամանակամիջոցում, վոր տըրաված եր մեզ, և աշխարհում չլաված այն դժվարությունների մեջ, վորոնց պահին հարկադրված եյինք աշխատելու, յերեւում և հետեւյալ հանրագումարային թվերից: Կենտրոնական Վիճակագրական Վարչությունը հենց նոր մամուլի համար պատրաստել և հացի արտադրության և սպառման ավանդները վնչ թե ամբողջ Խորհրդային Ռուսաստանի, այլ նրա 26 նահանգների համար:

Այսպիսի հանրագումարներ ստացվեցին.

Խորհրդային Ռուսաստանի 26 նահանգ- ները	Բնակչու- թյունը (միոններով)	Հարաբեկ անդամանությունը (միոններով)	Հաց են մատակա- րարել			
			Պարեն-	Տոսուա- ժուկո- մասը	Հացի անդամանությունը (միոններով)	Հացի անդամանությունը (միոններով)
			(Միոն փթերով)	(Միոն փթերով)	Հացի անդամանությունը (միոններով)	Հացի անդամանությունը (միոններով)
Արտադրող նահանգները	Քաղաքն. 4,4 Քյուղեր 28,6	— 625,4	20,9	20,6	41,5 481,8	9,5 16,9
Աղտոտη նահանգները	Քաղաքն. 5,9 Քյուղեր 13,8	— 114,0	20,0 12,1	20,0 27,8	40,0 151,4	6,8 11,0
Ընդամենը	(26 նահ.) 52,7	739,4	53,0	68,4	714,7	13,6

Յեվ այսպիս մոտավորապես հացի կեսը քաղաքներին տալիս և Պարենժողկոմատը, մյուս կեսը—տոպրակավորները: 1918 թվին քաղաքային բանվորների սննդի ճիշտ հետազոտումը տվել և հենց այդ համամասնությունը: Հստավորում պետության մատակարարած հացի համար բանվորը վճարում է ինն անգամ ավելի պակաս, քան տոպրակավորներին: Հացի սոլեկտուատիվ գինը տան անգամ ավելի բարձր և պետական գնից: Այս և ասում բանվորական բյուջեների ճշգրիտ ուսումնասիրությունը:

IV

Մեջբերված տվյալները, յեթե լավ մտածենք նրանց մասին, տալիս են ճշգրիտ նյութ, վոր պատկերում և նույնապատճենի ժամանակակից եկոնոմիկայի բոլոր հիմնական գծերը:

Աշխատավորներն ազատագրված են դարավոր հարստացարողներից և շահագործողներից՝ կալվածատերերից ու կապիտալիստներից: Խսկական աղատության և խսկական հավասրության այդ առաջննթաց քայլը, մի քայլ վոր իր մեծությամբ, իր չափերով, իր արագությամբ աշխարհում տեսնված, հաշվի չի առնվում բուրժուազիայի կողմանիցների կողմից (նույն թվում մասնաբուրժուական գենուրատների), վորոնք խոսում են աղատության ու հավասարության մասին պառամենտական բուրժուական գեմոկրատիայի իմաստով, խարդախորեն հայտարարելով այն՝ ընդհանրապես «գեմոկրատիա» կամ «զուտ» գեմոկրատիա (Կառուցկի):

Բայց աշխատավորները հաշվի յեն առնում հենց իրական հավասարությունը, իրական աղատությունը (աղատությունը կապիտալիստներից ու կապիտալիստներից) և այդ պատճառով այնպիս ամուր կանգնած են խորհրդային իշխանության կողմը:

Գյուղացիական յերկրում պլրուետարիատի դիկտատուրայից առաջինը շահեցին, ամենից շատ շահեցին, միանգամմից շահեցին առհասարակ գյուղացիները: Ռուսաստանում

գյուղացին սովահար եր լինում կալվածատերերի ու կապիտալիստների որով: Մեր պատմության յերկար դարերի ընթացքում գյուղացին դեռ յերբեք հնարավորություն չի ունեցել աշխատելու իրեն համար. նա սովահար եր մնում՝ հարյուրավոր միլիոն փութ հաց տալով կապիտալիստներին, քաղաքներին և արտասահմանին: Պրոլետարիատի դիկտատորակի որով առաջին անգամ գյուղացին աշխատեց իրեն համար և սնվեց տվիլի լավ, քան բարձագին: Առաջին անգամ գյուղացին ազատություն տեսավ իրականում, ազատություն՝ ուտելու իր հացը, ազատություն սովոր: Հողի բաժանման ժամանակ, ինչպես հայտնի յէ, մասիմալ հավասարություն հաստատվեց. դեղքերի վիթխարի մեծամասնության մեջ գյուղացիները բաժանում են հողն «ըստ ուտողների»:

Սոցիալիզմը դասակարգերի վոչնչացումն ե:

Դասակարգերը վոչնչացնելու համար հարկավոր ե, նաև, տապալել կալվածատերերին ու կապիտալիստներին: Խոդրի այդ մասը մենք իրավործել ենք, բայց դա միայն մի մասն ե և ընդունին վոչ ամենադժվարը: Դասակարգերը վոչնչացնելու համար հարկավոր ե, յերկրորդ, բանվորի և գյուղացու միջև յեղած տարբերությունը վոչնչացնել բարորին աշխատավորներ գարձնել: Դա միանգամից չի կարելի առնել: Այդ խնդիրն անհամեմատ ավելի դժվար ե և անհրաժեշտորեն տևական: Դա մի ինդիք ե, վորչի կարելի վճռել վորեից և դասակարգի տապալմամբ: Դա կարելի յէ վճռել միայն ամրոգ հասարակական տնտեսության կազմակերպական վերակառուցմամբ, անհատական, մեկուսացած, մանր ապրանքային տնտեսությունից հասարակական խոշոր տնտեսությանն անցնելով: Այդպիսի անցումն անհրաժեշտաբար չափազանց տեսական ե: Այդպիսի անցումը կարելի յէ միայն դանդաղեցնել և դժվարացնել փութկոտ և անդգուշ վարչական որենսդրական միջոցներով: Արագացնել այդ անցումը կարելի յէ միայն այնպիսի ոգնությամբ գյուղացուն, վորը նրան հնարավորություն կտար հոկայական չափերով լավացնելու վող

յերկրագրծական տեխնիկան, արմատապես փոխակերպելու այն:

Խնդրի յերկրորդ, ամենադժվար մասը, վճռելու համար բուրժուատիային հաղթած պրոլետարիատը պետք ե անշեղորեն տանի գյուղացու վերաբերմամբ իր քաղաքականության հետևյալ հիմնական գիծը: Պրոլետարիատը պետք ե բաժանի, սահմանադատի աշխատավոր գյուղացուն սեփականաեր գյուղացուց, աշխատող գյուղացուն չարչի գյուղացուց, քրտնաշան գյուղացուն սպեկուլանու գյուղացուց:

Այդ սահմանադատման մեջ ե սոցիալիզմի ամբողջ լուրջունելը:

Յեղ զարմանալի չե, վոր խոռոքով սոցիալիստները, գործով մանր-բուրժուատիան գեմոկրատները (Մարտովներն ու Զերնովները, Կառեցկիները և Բնկ.) սոցիալիզմի այդ եյությունը չեն հասկանում:

Այսուղ մատնանշված սահմանադատումը շատ դժվար ե, վորովհետեւ կենդանի կյանքում «գյուղացու» բոլոր հատկությունները, վորքան ել նրանք տարբեր լինեն, վորքան ել նրանք հակասական լինեն, միաձուլված են մի ամբողջ գյության մեջ: Բայց և այնպիս սահմանադատումը հնարավոր ե, և վոչ միայն հնարավոր ե, այլև նա անխուսափելի որին ըլլում ե գյուղացիական տնտեսության և գյուղացիական կյանքի պայմաններից: Աշխատավոր գյուղացուն դարերով հարստահարել են կալվածատերերը, կապիտալիստ դարերով չարստահարել են ապեկուլանաները և երանց պետությունը, ներառյալ ամենազեմոկրատիկ բուրժուատիան հանրապետությունները: Աշխատավոր գյուղացին դարերի ընթացքում իր մեջ դաստիարակել և ատելություն և թշնամություն այդ հարստահարիչների և շահագործողների նկատմամբ, իսկ կյանքի տված այդ «դաստիարակությունը» հարկադրում ե գյուղացուն դաշնոր վորոնել բանվորի հետ ընդգմմ կապիտալիստի, ընդգեմ սպեկուլանու, ընդգեմ չարչու: Իսկ հենց միենույն այդ միջոցին եկոնոմիկական իրադրությունը, ապահովային անտեսության եկոնոմիկական իրադրությունը

գյուղացուն անխոռսափելիորեն դարձնում ե (վհշ միշտ, բայց ամենաշատ դեպքերում) չարչի և սպեկուլարնուտ:

Վերեւում մեր մեջբերած վիճակագրական տվյալները ակնառու կերպով ցույց են տալիս գյուղացի-աշխատավորի և գյուղացի-սպեկուլարնուտի միջև յեղած տարրերությունը: Ահա այն գյուղացին, վոր տվել է 1918—1919 թ. թ. քաղաքների քաղցած բանվորներին 40 միլիոն փութ հաց կայուն պետական գներով, պետական որդանների ձեռքը, չնայած այդ որդանների բոլոր պակասություններին, վորոնց մասին շատ լավ գիտակցում եր բանվորական կառավարությունը, բայց վորոնք հնարավոր չեր վերացնել սոցիալիզմին անցնելու առաջին շրջանում,—ահա այդ գյուղացին գյուղացի-աշխատավոր ե, սոցիալիստ-բանվորի լիակատար իրավատեր-ընկերը, նրա ամենահուսալի գաշնակիցը, հարազատ յեղբայրը կապիտալի լժի գեմ մղվող պայքարում: Իոկ ահա այն գյուղացին, վոր գաղտնաբար ծախել և 40 միլիոն փութ հաց տասն անդամ ավելի բարձր գնով, քան պետականը, ողտագործելով քաղաքացին բանվորի կարիքն ու քաղցը, խարելով պետությանը, ուժեղացնելով և ծնելով ամենուրեք խարելություն, կողովուա, սրիկայական խարդախություններ,—ահա այդ գյուղացին սպեկուլարնուտի, կալիստալիստի դաշնակցը, բանվորի գասակարգային թշնամին ե, շահագործող ե: Վորովինեան ունենալ հացի ավելցուկ, վոր հավաքված և համապետական հողից, ստանդակությամբ այն գործիքների, վորոնց ստեղծման համար այսպես թե այնպես գործադրված և վհշ միայն գյուղացու, այլև բանվորի աշխատանքը և այլն, ունենալ հացի ավելցուկ և նրանով սպեկուլացիա անել—նշանակում ե քաղցած բանվորի շահագործողը լինել:

Դուք պատության, հավասարության, դեմոկրատիայի խախտողներ եք,—ամեն կողմից գոռում են մեղ վրա, ցույց տալով մեր սահմանադրության մեջ բանվորի և գյուղացու անհավասարությունը, սահմանադրի ցրումը, հացի ավելշուկի բռնի գրավումը և այլն: Մենք պատասխանում ենք՝ աշխարհում չի յեղել մի պետություն, վորն այնքան շատ

բան արած լինելը այն փաստական անհավասարությունը, այն փաստական անազատությունը վերացնելու համար, վարոնցից դարերով տանջվել ե աշխատավոր գյուղացին: Բայց դյուղացի սպեկուլարնուտի հետ մենք հավասարություն յերբեք չենք ընդունի, ինչպես վոր չենք ընդունի շահա-գործողի և շահագործվողի, կուշտի և քաղցածի «հավասա-րությունը», առաջնի «ազատությունը»՝ յերկրորդին կողոպ-տելու: Իոկ այն կրթված մարդկանց հետ, վորոնք չեն ուզում հասկանալ այդ տարրերությունը, մենք կվարվենք ինչպես սպիտակ-գվարդիականների հետ, թեկուզ և այդ մարդիկ կոչվեն դեմոկրատներ, սոցիալիստներ, ինտերնա-ցիոնալիստներ, կառուցկիներ, Զերնովներ, Մարտովներ:

V

Սոցիալիզմը դասակարգերի վոչնչացումն ե: Պրոլետա-րիատի գիկտատուրան այդ վոչնչացման համար արել և այն ամենը, ինչ կարողացել է: Բայց միանգամբից դասակարգե-րը վոչնչացնել չի կարելի:

Յեվ դասակարգերը մնացին ու կմնան պրոլետարիատի գիկտատուրայի դարաշրջանի ընթացքում: Դիկտատուրան հարկագոր չի լինի, յերբ դասակարգերը չքանան: Նրանք չեն չքանա առանց պրոլետարիատի գիկտատուրայի:

Դասակարգերը մնացին, բայց յաւբենաբնյուրը կերպա-րանափոխեց պրոլետարիատի գիկտատուրայի դարաշրջա-նում, փոխվեց նաև նրանց գոխնարարերությունը: Դասա-կարգային պայքարը չի չքանում պրոլետարիատի գիկտա-տուրայի որով, այլ ընդունում և միայն այլ ձևեր:

Պրոլետարիատը կալիստալիզմի որով հարստահարված դասակարգ եր, մի դասակարգ, վոր գրկված եր արտադրու-թյան միջոցների ամեն տեսակ սեփականությունից, մի դասակարգ, վոր մեն-մենակ եր հակադրված բուրժուազիա-յին անմիջականորեն և ամբողջովին, ուստի և միայն նա յեր ընդունակ մինչև վերջը հեղափոխական լինելու: Պրո-լետարիատը՝ բուրժուազիային տապակելով և քաղաքական

թշխանությունն նվաճելով՝ դարձավ տիրապեսոյ գասակարգ։ Նա պահում է իր ձեռքին պետական իշխանությունը, բայց անորինում և արդեն հանրայնացած արտադրության միջոցները, նա զեկվարում և տատանվող միջին տարրերին ու գասակարգերին, նա ճնշում է շահագործողների դիմադրության աճող յեռանգը։ Այդ բոլորը—գասակարգային պայքարի հատուկ խնդիրներ են, վոր պրոլետարիատն առաջ չեր դնում և չեր կարող դնել:

Ծահագործողների, կարվածատերերի և կապիտալիստ-ների դասակարգը չչքացավ և չի կարող միանգամից չքանալ պրոլետարիատի դիկտատուրայի որով: Ծահագործողները ջարդված, բայց վոչնչացված չեն: Նրանք ունեն միջազգային բազա, միջազգային կապիտալ, վորի մի բաժանմունքն են նրանք հանգիսանում: Նրանց մոտ մնացել են մասամբ արտադրության վորոշ միջոցներ, մնացել երամ, մնացել են խոշոր հասարակական կապեր: Նրանց դիմադրության յեռանդն աճել ե հարցուրավոր և հաղարավոր անգամ հենց նրանց պարտության հետևանքով: Պետական, ռազմական, տնտեսական կառավարման «արվեստը» նրանց տալիս ե շատ ու շատ մեծ գերակշռություն, այնպես վոր նրանց նշանակությունն անհամեմատ ավելի մեծ է, քան նրանց բաժինը բնակչության ընդհանուրը թվի մեջ: Տապալված շահագործողների դասակարգային պայքարն անչափ ավելի կատաղի յերածել ընդգեմ շահագործվողների հաղթական ավանդարդի, այսինքն ընդգեմ պրոլետարիատի: Եեկ դա այլ կերպ լինել չի կարող, յեթե նեղափոխության մասին ենք խոսում, յեթե չենք նենազափոխում այդ գաղափարը (ինչպես անում են Ա Խնտերնացիոնալի բոլոր ներուները) ուել Փորմիստական իլլյուզիաներով:

Վերջապես, զյուղացիությունը, ինչպես և առհասարակ ամեն մի մանր բուրժուազիա, պրոլետարիատի դիկտատուրայի որով ևս գրավում է միջին, միջնաշերտային դրություն։ մի կողմից՝ դա—աշխատավորների բավական նշանակալից (իսկ հետամնաց Ռուսաստանում՝ ահազին) մասսայի, վոր միավորվում և աշխատավորների ընդհանուր

շահով՝ աղաւագրվելու. կալվածատերից և կապիտալիստից-
մյուս կրդմից՝ դրանք կղզիացած մանր տնտեսատերեր են,
ուժականատերեր ու առևտրականներ: Այդպիսի տնտեսա-
կան դրամթյունն անխուսափելիորեն առաջ ե բերում տա-
տանումներ պղուեարիատի ու բուրժուազիայի միջև: Իսկ
այս վերջինների միջև յեղած պայքարի սրման միջոցին բո-
լոր հասարակական հարաբերությունների անհավատալիո-
ւեն խիստ բեկման պահին, այն պայմաններում, յերբ հենց
դյուլացինների և ընդհանրապես մանր բուրժուանների կող-
մից նկատվում ե ամենամեծ սովորություն դեպի հինգ,
ուստինան, անխոփոխելին, բնական ե, վոր մենք անխու-
սափելիորեն պիտի նկատենք նրանց մեջ անցումն մի կող-
մից զեպի մյուսը, տատանումներ, զրջադարձեր, անվտա-
հություն և այլն:

Այդ գառակարգի—կամ այդ հասարակական տարրերի—նկատմամբ պրոլետարիատի խնդիրը կայանում է զեկավարության մեջ, պայքարի մեջ՝ նրա վրա ազլեցություն ձեռք

Յերելու համար: Իր հետեւց տանել տատանվողներին, անկայուններին,—ահա թե ինչ պետք է անի պրոլետարիատը:
Յեթե մենք իրար զուգազրենք բոլոր հիմնական ուժերը կամ դասակարգերը և պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով նրանց կերպարանափառված փոխհարաբերությունը, մենք կտեսնենք, թե վորպիսի անհուն թեորիական անմտություն, վորպիսի բթամտություն և հանդիսանում այն առողյա մանր-բուրժուական պատկերացումը, վոր մենք տեսնում ենք II Բնտերնացիոնալի բոլոր ներկայացուցիչների մոտ՝ սոցիալիզմին ըսդհանրապես «գեմոկրատիայի միջոցով» անցնելու մասին: Բուրժուազիայից ժառանգած մի նախապաշարմունք՝ «գեմոկրատիայի» անպայման ալպադասակարգային բովանդակության վերաբերմամբ—ահա այդ սխալի հիմքը: Իսկ իրոք գեմոկրատիան ևս պրոլետարիատի դիկտատուրայի որով անցնում և մի բոլորովին նոր փուլ և դասակարգային կոիվը բարձրանում և ավելի բարձր առտիճանի, յենթարկելով իրեն ամեն ինչ և ամեն տեսակի ձևերը:



Ազատության, հավասարության, դեմոկրատիայի մասին ընդհանուր ֆրազներն իրավես հավասարազոր են այն հասկացողությունները կուրորեն կրկնելուն, վորոնք հանդիսանում են ապրանքային արտադրության հարաբերությունների արտանկարը։ Այդ ընդհանուր ֆրազների միջոցով վճռել պրոլետարիատի գիտատուրայի կոնկրետ խընդիրները—նշանակում ե ամբողջ գծով անցնել բուրժուակայի թեորիական, սկզբունքային դիրքին։ Պրոլետարիատի տեսակետից հարցը դրվում ե միայն այսպես. ազատություն վմբ դասակարգի ճնշումից, վոր դասակարգի հավասարում վորի հետ, դեմոկրատիա մասնավմբ սեփականության վերացման համար մզվող պայքարի բազայի վրա և այլն։

«Անտի-Դյուրինգում» Ենգելսը վաղուց պարզաբանել է, թե հավասարություն հասկացողությունը՝ ապրանքային արտադրության հարաբերությունների արտանկարը լինելով, դառնում ե նախապաշարմունք, յեթե չհասկանանք հավասարությունը դասակարգերի վանչացման իմաստով։ Հավասարության բուրժուական-դեմոկրատական և ոոցիալիստական հասկացողության տարբերության այդ այլբենական ճշմարտությունը շարունակ մոռանում էն։ Իսկ յեթե չմոռանալ այդ, ապա ակներև և դառնում, վոր պրոլետարիատը բուրժուազիային տապակելով՝ գրանով իսկ ամենավճռական քայլ և անում դասակարգերը վոչնչացնելու համար, և վոր այդ բանն ավարտելու համար պրոլետարիատը պետք է շարունակի իր դասակարգային պայքարը, ոգտագործելով պետական իշխանության ապարատը և գործադրելով տապալված բուրժուազիայի նկատմամբ և տատանվող մանր բուրժուազիայի վերաբերմամբ պայքարի, ազդեցության, ներգործության տարբեր միջոցներ։



Խմբագիր Ա. Հավեանթիսյան

Սըբագրիչ Հ. Մանվելյան

Կոնտրու արբագրիչ Լ. Աբովյան

Գրալիսի լիազոր № 3318, հրատ. № 594

Գատվեր № 126, տիրաժ 10.000

Հանձնվել և արտադրության 31/VII 1938 թ.

Առողագրվել և տպագրելու 22 VIII 1938 թ.

Գինը 25 կ.

Գետրատ—Քաղաքական գրականության հրատարակչության
տպարան, Յերևան, Ալավերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0178304

ԳԻՒԾ 25 Կ.

В. И. ЛЕНИН
ЭКОНОМИКА И ПОЛИТИКА
В ЭПОХУ ДИКТАТУРЫ
ПРОЛЕТАРИАТА

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1938